

ՎԵՆԵՐԱԿԱՆ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ԱՄՈՒՄՆՈՒԹԻՒՆ

Առողջաբանական ընկերութիւններու կողմէ ժողովուրդին կը տրուին քարթեր, պատկերներ, որոնք կը ներկայացնեն երախաներուն պահանջները: Այսպէս, յաճախ պատկերներուն տակ կը գրուի. «Մենի մայրիկին կարք կ'ուզենի»: «Կ'ուզենի որ նանկերուն դէմ պաշտպանի մեզ»: «Մաքուր օդ կ'ուզենի»: Այդ պահանջները անոնց արդար իրաւունքներն են: Սակայն յաճախ կը մոռցուի անոնց գլխաւոր պահանջը. «Առողջ ծնողներ կ'ուզենի»: Արդարեւ, ֆրանսական քաղաքապետարաններու մէջ, պսակի պաշտօնական արձանագրութեան ընթացքին նորահաս ամուլին կը տրուին գրքոյկներ, որոնք կը բացատրեն ամուսիններու փոխադարձ պարտականութիւնները, յղութեան առողջապահութիւնը, միշտ սկսելով առաջին զաւկին յետծննդեան շրջանէն: Այսինքն թէ այդ գրքոյկները կը մոռնան գլխաւոր պայմանը ապագայ երջանկութեան, — ծնողին առողջապահութիւնը, հաստատուած նախամուսնական ֆնկութեամբ:

Արդ, ընտանիքի օճախին մուխը կը մարեն ընդհանրապէս այն հիւանդութիւնները, որոնք կը կոչուին վեներական, կամ ուրիշ անունով՝ սիֆիլիզ եւ ջերմամիզութիւն:

Ահա թէ ի՞նչ կ'ընէ սիֆիլիսը. — Ահա մանկամարդ աղջիկ մը առողջ և զուարթ, որ առանց նախամուսնական քննութիւն պահանջելու կ'ամուսնանայ երիտասարդ ֆրանկախտաւորի մը հետ: Երիտասարդը անշուշտ դարմանուած է, բայց մակերեսային: Այսպէս կը վարակէ կինն ալ, որ ամիսներ յետոյ յոգնածութիւն մը կը զգայ, թեւերը «կը կտրուին», գիշերը սարսափելի կը ցաւի գլուխը, սիրտը կը բաբախէ, արիւնը կը նուազի, մազերը և յօնքերը կը թափին: Սիֆիլիզն է, որուն առաջին շրջանը աննշմար անցած ըլլալով, այնուհետեւ սանձարձակ կը տարածէ իր աւերը: Կնոջ սքանչելի ձայնը կը խափանուի, տեսողութիւնը կը տկարանայ և աչքին փոսերը կը ցաւին, մէզին մէջ բնասպիտային տարրերը կը շատնան (15-20 կրամ), դեղնութիւն մը կը պատէ մարմինը, տարիներ վերջ քիթին ոսկորները կը ցաւին, քիթը կ'ուռի ու կը մեծնայ, օր մըն ալ «կը թափի», սիրտին մայր երակն ալ կ'ուռի, տոպրակ կը շինէ, եւ հետզհետէ դժբախտ կինը կը դառնայ կոյր, անդամալոյծ և յիմար:

Ամուսինը եւս նոյն պատահականութեանց կ'ենթարկուի իր կարգին: Եթէ կը ծխէ, լեզուի խլիրդ (cancer) կ'ուսնենայ: Բայց ոչ

միայն կը խանգարէ այր ու կնոջ երջանկութիւնը, այլ նաև կը պատուհասէ զաւակը, որ կը ծնի անոնցմէ:

Արդարև, կիներ, որ երջանիկ կը զգար ինքզինք, մտածելով իր յղութեան մասին, յանկարծ «տղայ կը ձգէ»: Այս չորս ամսուան վիժումէն յետոյ, երկրորդ զաւակն ալ կը վիժի հինգերորդ ամսուն: Երրորդ զաւակը՝ եօթերորդ ամսուն: Չորրորդ զաւակը բնական ծնունդ մը կ'ունենայ, բայց անմիջապէս կը մեռնի: Այս պարագան չափազանց յաճախադէպ է իրականութեան մէջ: Արդարև Ֆրանսայի մէջ մէկ տարուան ընթացքին կը պատահին 60,000 վիժումներ, բոլորն ալ սիֆիլիզի արդիւնք: Եթէ աւելցնենք վաղահասներուն մահերը, զորս դարձեալ սիֆիլիզը կը պատճառէ, Ֆրանսա մէկ տարուան մէջ սիֆիլիզի մահադիւն կը յանձնէ 140,000 հոգի: Պարագան նոյնն է գրեթէ բոլոր երկիրներուն մէջ:

Գանք մեր դժբախտ կնոջ: Վիժումներէ յետոյ, կը պատահի, որ վերջնեկ զաւակը ողջ մնայ: Բայց երախայ մը, որուն շրթները կը տրուած են, աչքերուն վրայ ճերմակ բիծեր կան կուրութեան, 2 տարեկան չեղած չի կրնար քալել, ջղագալարումներ կ'ունենայ, մէզը չի բռներ, քիֆեր ունի, մատները կը կրծէ: Անոնց բարոյական նկարագիրն ալ անբնական է, կը փախին դպրոցէն ու տունէն, ապուշ կը մեծնան: Այս պատկերը, որ դեռ լրիւ չէ, անշուշտ կարելի է քիչ մը բարւոքել՝ դարմանելով հիւանդութիւնը: Սակայն երբեմն դարմանումը չի յաջողիր, երբեմն ամուսինը կ'ուշացնէ՝ ծածկելու համար իր ախտը: ՈՃԻՐԸ կատարեալ է: ՈՃԻՐ ՄԸ, պարզ այն պատճառաւ, որ նախամուսնական բժշկական քննութիւնը կատարուած չէ:

Այս քննութիւնը եւս յաճախ մեղադրութեան տակ կը մնայ: Այսպէս երիտասարդներ կան, որոնք քիչ մը ժամանակ դարմանուելէ յետոյ կ'ամուսնանան՝ առանց ապահով ըլլալու դարմանումին արդիւնքին մասին: Ուրիշներ ալ կան որոնք հարուստ և լեցունակեկ օժիտով ազջիկ մը ձեռքէ չփախցնելու համար՝ ամէն միջոց կը գտնեն բժշկական քննութիւնը իրենց նպաստաւոր դարձնելու: Շատեր աշխատանոցներու, լապոգաթուառներու մեղսակցութեան կը դիմեն: Նոյնէս բժշկական գաղտնապահութեան օրէնքներէն կ'օգտուին: Բայց մեղքը որո՞ւնն է, ո՞վ կը դառնայ զոհ յետոյ:

Իսկ թէ ի՞նչ կ'ընէ ջերմամիզութիւնը. — Գիշ մը այնպէս կարծուած է թէ ջերմամիզութիւնը թեթեւ հիւանդութիւն մըն է: Չեն գիտեր թէ սիֆիլիզի նման կը մարէ ընտանիքներու օճախին մուխը: Կնոջ մէջ ջերմամիզութիւնը զանազան հիւանդութիւններու դուռ կը բանայ: Արգանդի, ձուարաններու և յարակից գործարան-

ներու բորբոքում կը պատճառէ, հարկ կը դառնայ վիրաբուժական գործողութիւններ կատարել: Յաճախ ամլութեան կը դատապարտէ կիներ: Մարդը եւս սեռային գործարաններու բորբոքում կ'ունենայ ամուլ կը մնայ: Սակայն ամէնէն սարսափելին ջերմամիզութեան յոգացաւն է, որ գրեթէ անդամալոյծ կը դարձնէ ենթական: Անտանելի ցաւերը յուսահատութեան կը մղեն զոհը: Արդարեւ որքան ցաւեր կան, որ արդիւնք են ջերմամիզութեան: Այսպէս վարակուած կին մը յղի մնալով զաւակ մը կը բերէ աշխարհ, բայց մանրէն կը կուրացնէ երախան: Այս դժբախտութեան դէմ նախազգուշութեան համար հիմա օրէնքը կը պարտադրէ նորածիններու աչքին մէջ կաթիցնել դժոխաքարի լուծոյթ կամ արժիրոյ:

Սովորական կեղն ալ հիւանդութիւն մըն է, որ թէև չի տարածուիր, չի վարակեր ամբողջ մարմինը, սակայն բորբոքում կը պատճառէ աւշային գեղձերու մէջ: Կիներ վարակելով այրը, և այրը վարակելով կիներ, դարձեալ դժբախտութիւնը կը նստի ընտանիքին մէջ:

Ահա թէ որքան կարեւոր է նախամուսնական բժշկական քննութիւնը, պայմանաւ որ գիտակցօրէն կատարուի ամուսնութեան թեկնածուներուն կողմէ: Կարեւոր է որ անոնք գիտնան թէ, սիֆիլիս կամ ջերմամիզութիւն ունեցող մը, երբ առանց բուժուած ըլլալու կ'ամուսնանայ, անպատճառ կը վարակէ իր կիներ և զաւակները, եւ կը մարէ օճախը, որովհետեւ կ'ենթարկուի եւ կ'ենթարկէ իր ընտանիքը ֆիզիքական, բարոյական և նիւթական շատ մը դժբախտութիւններու:

Ջերմամիզութեան բուժուած ըլլալը ստոյգ կարելի է հաստատել յատուկ քննութիւններով, մասնաւորաբար սերմի մշակումով:

Սիֆիլիսի բուժուած ըլլալը ստոյգ կարելի չէ հաստատել, բայց լուրջ ու երկարատեւ դարմանում մը, կարեւոր երաշխիք մըն է բուժուած ըլլալու: Դարմանող բժիշկը միայն, նկատի առնելով հիւանդութեան տևողութիւնը, դարմանումին ուժգնութիւնը, արիւնի քննութեանց արդիւնքները, կրնայ սամուսնութիւնը արտօնել: Կարգ մը նպաստաւոր պարագաներու տակ այդ արտօնութիւնը կրնայ տրուիլ երկու տարիէն, բայց յաճախ 3-5 տարիէն:

Ամէն պարագայի պէտք է նախ բուժուիլ ու յետոյ ամուսնանալ: Անոնք որ իրենց հիւանդութիւնը կը պահեն ու կ'ամուսնանան ոմիւր կը գործեն թէ իրենց անձին եւ թէ իրենց ընտանիքին հանդեպ:

ՏՔԹ. ՔԷՅՐԱ.